

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. մարտի 19-ի թիվ 68-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԾԱԽՍԵՐԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	3
2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	6
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ	7
4. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ.....	11
5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	13
6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	16
7. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	34
8. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ	40
9. ԶՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ (ԳԱՂՏՆԻ) ՄԱՍ	44
10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	45

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 84-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Պահպանման ծախսեր, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության օգտագործում:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 05.12.2019 թվականի թիվ 1764-Ն ՀԳ որոշում, ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում, ՀՀ կառավարության 20.10.2016 թվականի «Ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1083-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 20-ի թիվ 771-Ն որոշում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2017թ հունվարի 1-ից մինչև 2019թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման

2020թ հունիսի 8-ից մինչև 2021թ փետրվարի 26-ը ներառյալ:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության համաձայն:

Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 5-րդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԱ	Մեկ անձից
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ՌԱՀ	Ռազմաարդյունաբերական համալիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
Հազ. դրամ	հազար դրամ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Պետական մարմին	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԻՏՁՄ	Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն
ԱՏՁՄ	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»
ՁԻՀ	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ
ՏՏՀՀ-2019	Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Համաժողով -2019»
Նախարարություն	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածի Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն անվանափոխվել է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության:

Համաձայն ՀՀ կառավարության 06.06.2019թ «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման ծախսային ծրագրերով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի և միջոցառումները կատարողի իրավունքների և 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված առանձին եկամտատեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման գանձման համար պատասխանատու պետական մարմնի լիազորությունները փոխանցելու մասին» N 726-Ն որոշման, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2019թ ծախսային ծրագրերից «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում» և «Հեռահաղորդակցության ապահովում» ծրագրերով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի և միջոցառումները կատարողի իրավունքները և 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված «Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար», «Փոստային կապի բնագավառ» և «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ» եկամտատեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման գանձման համար պատասխանատու սահմանված ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լիազորությունները փոխանցվել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը:

Համաձայն «ՀՀ կառավարության 22.05.2018 թվականի թիվ 580-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2019թ-ի հունիսի 20-ի թիվ 923-Ա որոշման 1-ին մասի 7-րդ կետի «Ռազմաարդյունաբերական կոմիտեն», որը գործել է ՀՀ պաշտպանության նախարարության կազմում, ճանաչվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ենթակա մարմին:

Հաշվի առնելով «Գիտական և գիտահետազոտական ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ

գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների պայմանագրերին առնչվող տեղեկությունների բնույթը հաշվեքննության ընթացիկ եզրակացության մի մասը ներկայացվել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով: Այդ ծրագրի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները ներառվել են եզրակացության չիրապարակվող (գաղտնի) մասում:

1. 2019 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագրի իրականացման համար տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային ալյանսին //WITSA/ անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի իրականացումն ապահովելու նպատակով պետության կողմից «ԱՏՁՄ» ՀԿ-ին, որը համարվում է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության իրավահաջորդը, 2015-2019թթ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերով հատկացվել է 750,000 ԱՄՆ դոլար (362,049.00 հազ. դրամ): 2019 թվականի թիվ 14 պայմանագրի 2.3.3 կետի պահանջի համաձայն մինչև 2019 թվականի հոկտեմբերի 30-ը համաժողովի մասնակիցներից հավաքագրված մուտքավճարներից (մասնակցության վճարներից), հովանավորչական փաթեթներից և այլ ներգրավված գումարներից «ԱՏՁՄ» ՀԿ-ն վերը նշված 362,049.00 հազ. դրամը պետք է փոխանցեր ՀՀ պետական բյուջե:

«ԱՏՁՄ» ՀԿ-ն դիմել է ՀՀ փոխվարչապետ Տ. Ավինյանին, խնդրելով պայմանագրում 348,530.60 հազ. դրամ ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունը վերախմբագրել նոր բովանդակությամբ, առաջարկելով կազմակերպության կողմից այդ գումարները չվերադարձվեն և դրանց հաշվին կատարվեն այլ պարտավորություններ:

Չնայած ի պատասխան ՀՀ փոխվարչապետի գրությանը ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության և ՀՀ ֆինանսների նախարարների պատասխաններին, որ «ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից առաջարկվող փոփոխություն կատարելը խնդրահարույց է մի շարք իրավական ակտերի դրույթների և ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության տեսանկյունից, քանի որ այն չի բխում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով ամրագրված արդյունավետության և օգտավետության սկզբունքների էությունից, ՀՀ կառավարությունը 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1927-Ն որոշմամբ **թույլատրել է** նախարարության և «ԱՏՁՄ» ՀԿ-ի միջև կնքված պայմանագրում և համաձայնագրում փոփոխություններ կատարելու միջոցով «ԱՏՁՄ» ՀԿ-ին ներել

2015-2019 թվականների «Տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային ալյանսին» /WITSA/ երաշխիքային կանխավճարն իրականացնելու նպատակով պետության կողմից տրամադրված և դեռևս ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.60 հազ. դրամի չափով պայմանագրային պարտավորությունը:

Չնայած նրան, որ պայմանագրում և համաձայնագրում համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, գումարը համարվել է ներված, իսկ պարտավորությունը մարված:

2. Դիջիտեք 2019» ցուցահանդեսի տաղավարի վարձակալության համար նախարարությունը «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի հետ կնքել է թիվ ԲՏԱՆ-ԳՉԾ- 2019/17 ծառայությունների մատուցման պայմանագիրը, որով 06.10.2019թ.-ից 09.10.2019 թ. ընկած ժամանակահատվածի համար «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ից «Երևան Էքսպո» կենտրոնի 1-ին հարկի տարածքից վարձակալել է 250 ք.մ տարածք, 1 ք.մ տարածքի գինը 84,000.00 դրամ արժեքով կամ օրական 1քմ-ի համար 21,000.00 հազ. դրամ:

«Երևան Էքսպո» կենտրոնը, որը պատկանում է «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին, «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ն 25.09.2019թ-09.10.2019թ ընկած ժամանակահատվածի համար վարձակալել է ամբողջ կենտրոնը իր հարակից տարածքներով (3300ք.մ.) 10,000.00 հազ. դրամ արժեքով, օրական 1 ք.մ.-ի համար 202 դրամ:

Նախարարության կողմից, «Երևան Էքսպո» կենտրոնի տարածքը վարձակալվել է միջնորդված ձևով, 1 ք.մ-ի դիմաց վճարելով է 103.9 անգամ ավելի թանկ:

3. ««Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողով-2019» միջոցառման շրջանակներում «ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից կատարված ծախսերը գերազանցել են Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 14-ի թիվ 238-Լ որոշմամբ հաստատված միջոցառման կազմակերպման նախահաշվով սահմանված ծախսերը՝ 791,094.20 հազ. դրամով: Նախահաշվով սահմանված ծախսերից ավելի կատարված ծախսերի վերաբերյալ կազմակերպության կողմից հիմնավորումներ չի ներկայացվել, իսկ ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ծախսերի նախահաշվի փոփոխություն չի կատարվել:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ ծրագրով «Դիջիթեք 2019» ցուցահանդեսի տաղավարների պատրաստում,

«Innoweek.uz 2019» նորարարական և ներդրումային համաժողովի մասնակցություն, «Singapore Week of Innovation and TeCHnology (SWITCH)» ցուցահանդեսին մասնակցություն և «QITCOM» ցուցահանդեսին մասնակցություն միջոցառումների շրջանակներում 14 պայմանագրեր կնքվել են որպես գնում չհանդիսացող ծախս, որոնք սակայն, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի, այդպիսին չեն համարվում:

4. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին:

Մենք հաշվեքննության ենք ենթարկել 2017-2019 թվականների ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից իրականացված՝ Պահպանման ծախսերի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության օգտագործման (այսուհետ՝ Ծրագիր) համապատասխանությունը հաշվեքննության առարկայի չափանիշներին (այսուհետ՝ Օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Հաշվի առնելով «Գիտական և գիտահետազոտական ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների պայմանագրերին առնչվող տեղեկությունների բնույթը հաշվեքննության ընթացիկ եզրակացության մի մասը ներկայացվել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով:

Ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարության պատասխանատվությունը խնդրո առարկայի համար

Նախարարության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծրագրի՝ Օրենսդրության և այլ իրավական ակտերի դրույթների համաձայն, իրականացման համար:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք Ծրագրի իրականացման վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությանը համապատասխան: Այդ մեթոդաբանությամբ պահանջվում է, որ մենք հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ Ծրագրի իրականացումը զերծ է էական անհամապատասխանություններից և խեղաթյուրումներից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի հետևանքով վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման էական անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված Ծրագրի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք գտնում ենք, որ ձեռք են բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցները մեր կարծիքի հիմնավորելու համար:

Ձևափոխված կարծիքի՝ ոչ լիարժեք եզրահանգման, հիմք

Ինչպես նկարագրված է հաշվեքննության ընթացիկ եզրակացության 6-րդ, 7-րդ և 9-րդ (չհապարակվող՝ գաղտի մաս) բաժիններում, Նախարարությունը ծրագիրն իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ վարչապետի որոշման, պայմանագրերի և այլ օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին անհամապատասխանություններով և խեղաթյուրումներով: 2017-2019 թվականների ընթացքում խեղաթյուրումներով օգտագործվել են 352,933.00 հազար դրամ ընդհանուր գումարով բյուջետային միջոցներ:

Ձևափոխված կարծիքի՝ ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ձևափոխված կարծիքի՝ ոչ լիարժեք եզրահանգման, հիմք» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, 2017-2019 թվականների ընթացքում ծրագրի իրականացումը բոլոր էական առումներով համապատասխանում է Օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին:

Արմեն Գևորգյան

ՀՀ Հաշվեքննիչ Պալատի անդամ

Ամսաթիվ

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը, որը հանդիսանում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվության տեխնոլոգիաների նախարարության իրավահաջորդը, ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 2017 թվականին 1,330,658.50 հազ. դրամ, 2018 թվականին 1,353,749.20 հազ. դրամ, իսկ 2019 թվականին 6,751,063.90 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը 2017 թվականին կազմել է 1,316,017.90 հազ. դրամ, 2018 թվականին 1,336,992.90 հազ. դրամ, 2019 թվականին 5,208,945.20 հազ. դրամ (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1
հազ. դրամ

Հոդվածներ		2017թ		2018թ		2019թ	
		Տարեկան ճշտված պլան	Դրամարկ ղային ծախս	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ ղային ծախս	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ ղային ծախս-
h/h	Ընդամենը հաշվեքննված ծախսային ծրագրեր	1,330,658.5	1,316,017.9	1,353,749.2	1,336,992.9	6,751,063.9 0	5,208,945.2 0
1	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ	98,660.00	92,932.24	98,660.00	96,237.70	194,974.00	143,837.20
2	Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագիր	149,595.40	149,595.40	149,595.40	149,595.40	149,595.40	149,595.40

Հոդվածներ		2017թ		2018թ		2019թ	
		Տարեկան ճշտված պլան	Դրամարկ դային ծախս	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ դային ծախս	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ դային ծախս-
3	2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագիր	95,872.00	95,845.00	96,572.00	96,572.00	1,259,693.0 0	34,935.60
4	Հեռահաղորդակցությ ան և կապի կանոնակարգման ծառայություններ	309,767.00	309,767.00	290,321.80	290,321.80	290,321.80	289,459.80
5	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարություննե րի աշխատակազմերի մասով)	577,508.90	568,623.08	619,400.00	605,066.02	669,009.20	660,389.60
6	Հեռուստատեսային ծառայություններ	99,255.20	99,255.20	99,200.00	99,200.00	121,910.00	121,910.00
7	«Ներուժ» սփյուռքահայ երիտասարդների սթարթափ					136,480.90	136,480.90

Հոդվածներ		2017թ		2018թ		2019թ	
		Տարեկան ճշտված պլան	Դրամարկ դային ծախս	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ դային ծախս	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ դային ծախս-
	ծրագիր						
8	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում					100,866.00	77,776.1
9	Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ					3,828,213.6	3,574,223.3

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 (1043-11003) 2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագիր

6.1.1 (1043-11003) Առկա է անհամապատասխանություն ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 14-ի ««Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողով-2019» միջոցառման ծրագիրը, միջոցառման կազմակերպման նախահաշիվը և միջոցառման անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 238-Լ որոշման 2-րդ կետի պահանջի հետ

Նշված որոշման 2-րդ կետով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին՝ (ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հանդիսանում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության իրավահաջորդը) հանձնարարվել է ՀՀ կառավարության անունից «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի հետ կնքել համաձայնագիր՝ «SSՀՀ-2019» միջոցառման հովանավորներից լրացուցիչ գումարների ներգրավման, դրանց հաշվին ծախսերի իրականացման չափանիշների որոշման, միջոցառման համար ձեռք բերված գույքի հետագա տնօրինման որոշումների ընդունման, լրացուցիչ գումարների հավաքագրման և ՀՀ կառավարություն վերադարձման մեխանիզմների սահմանման մասին:

2019 թվականի մայիսի 10-ն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը «ԱՏՁՄ» ՀԿ-ի հետ կնքել է համաձայնագիր, սակայն համաձայնագրով չեն որոշվել միջոցառման հովանավորներից լրացուցիչ գումարների ներգրավման, դրանց հաշվին ծախսերի իրականացման չափանիշները և չեն սահմանվել լրացուցիչ գումարների հավաքագրման մեխանիզմները:

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել

6.1.2 (1043-11003) Առկա է անհամապատասխանություն 2019 թվականի մայիսի 10-ին «ԱՏՁՄ» ՀԿ-ի հետ կնքած համաձայնագրի 5-րդ կետի պահանջի հետ:

Համաձայն համաձայնագրի 5-րդ կետի պահանջի Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով (մինչև հուլիսի 10-ը ներկայացնել միջանկյալ, մինչև հոկտեմբերի 31-ը ավարտական հաշվետվություն՝ ՀՀ ֆինանսների նախարարի

01.04.2015 թվականի թիվ 176-ն հրամանով հաստատված ձևաչափով) միջոցառման ծրագրի կատարման վերաբերյալ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը ներկայացնել հաշվետվություն ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների, «SSՀՀ-2019» միջոցառման մասնակցության վճարների, հովանավորչական փաթեթներով մուտքագրված դրամական միջոցների, ներգրավված այլ գումարների և կատարված ծախսերի վերաբերյալ:

«ԱՏՁՄ» ՀԿ-ն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն կնքված համաձայնագրով սահմանված ժամկետներով և կարգով հաշվետվություն չի ներկայացվել: Կազմակերպությունը ներկայացրել է միայն ֆինանսական ամփոփ հաշվետվություն-տեղեկանք, որով մուտքերը կազմել են 1,490,233.40 հազ. դրամ, իսկ ծախսերը 1,997,532.20 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Հարկ է ընդգծել, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունը վերաբերում է Նախարարության կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ծախսմանը, սակայն, քանի որ նշված ծախսերը չեն իրականացվել Նախարարության միջոցների հաշվին՝ բնականաբար այդ ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ չէր կարող ներկայացվել Նախարարություն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չի ընդունվում, քանի որ բերված առարկությունը չի համապատասխանում իրականությանը: Համաձայնագրի 5-րդ կետով պարտավորեցվել է Նախարարությանը հաշվետվություն ներկայացնել ինչպես ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների այնպես էլ «SSՀՀ-2019» միջոցառման մասնակցության վճարների, հովանավորչական փաթեթներով մուտքագրված դրամական միջոցների, ներգրավված այլ գումարների և կատարված ծախսերի վերաբերյալ:

6.1.3 (1043-11003) Առկա է անհամապատասխանություն ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 14-ի ««Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողով-2019» միջոցառման ծրագիրը, միջոցառման կազմակերպման նախահաշիվը և միջոցառման անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 238-Լ որոշմամբ հաստատված հավելված 2-ով՝ միջոցառման կազմակերպման նախահաշիվով սահմանված ծախսերի հետ

«ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից կատարված ծախսերը գերազանցել են Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 14-ի թիվ 238-Լ որոշմամբ հաստատված միջոցառման կազմակերպման նախահաշիվով սահմանված ծախսերը՝

791,094.2 հազ. դրամով: Նախահաշվով սահմանված ծախսերից ավելի կատարված ծախսերի վերաբերյալ կազմակերպության կողմից հիմնավորումներ չի ներկայացվել, իսկ ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ծախսերի նախահաշվի փոփոխություն չի կատարվել:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Անհրաժեշտ է ընդգծել, որ Կազմակերպության կողմից կատարված ծախսերի հաշվետվությունները ներկայացվել են գործընթացի ավարտից հետո, բնականաբար հիմնավորումներ ներկայացնելու կամ նախահաշվի փոփոխություններ կատարելու հնարավորություն Նախարարությունը չէր կարող ունենալ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չեն ընդունվում, քանի որ ոչ թե նախահաշիվն են կազմում փաստացի ծախսերի հիման վրա այլ փաստացի ծախսերը պետք է կատարվեին ՀՀ վարչապետի վերը հիշատակված որոշմամբ հաստատված նախահաշվի հիման վրա: Բացի այդ համաձայն 2019թ-ի մայիսի 10-ի համաձայնագրի 6.2 կետի Նախարարությունը իրավունք ուներ պահանջելու, որ կազմակերպությունը ծախսերն իրականացնելու բացառապես այդ հավելվածում ներկայացված ուղղություններով:

6.1.4 (1043-11003) Առկա է անհամապատասխանություն 2019 թվականի մայիսի 10-ին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «ԱՏՁՄ» ՀԿ միջև կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 14 պայմանագրի 2.3.4 կետի պահանջի հետ

Միջոցառման մասնակցության վճարների հաշվին մուտքագրված գումարները, որոնք համաձայն պայմանագրի 2.3.4 կետի պահանջի պետք է առաջնահերթ ուղղվեին միջոցառման երաշխիքային կանխավճարի ամբողջ գումարի մարմանը, օգտագործվել են այլ նպատակներով և առանց նախարարության հետ նախապես համաձայնեցման:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Հաշվեքննողն արձանագրել է, որ կազմակերպությունը Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պարտավոր էր ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ համաձայնեցնել միջոցառման մասնակցության վճարների հաշվին մուտքագրված գումարները, որոնք պետք է առաջնահերթ ուղղվեին միջոցառման երաշխիքային կանխավճարի ամբողջ գումարի մարմանը:

Պետք է նկատել, որ Պայմանագրի 2.3.4 կետում Կազմակերպության համար՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ միջոցառման մասնակցության վճարների հաշվին մուտքագրված գումարների ծախսման համաձայնեցման պահանջ սահմանված չէ, այլ սահմանված է պարտավորություն ուղղել այդ միջոցները՝ երաշխիքային կանխավճարի ամբողջ գումարի մարման նպատակով, որն էլ իրականացվել է, քանի որ Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող 2019թ. օգոստոսի 29-ին կնքված Համաձայնագիր 1-ով ամրագրված է, որ Պայմանագրի 1.1 կետում նշված գումարից Պետական մարմնի կողմից Կազմակերպությանը տրամադրվել է 106.325.000 ՀՀ դրամ, ընդ որում Համաձայնագիր 1-ով ամրագրված է նաև, որ Կազմակերպությանը տրամադրված 106.325.000 ՀՀ դրամ գումարից 71,389.400 (58.217.400+13,172.0) ՀՀ դրամը Կազմակերպության կողմից Պայմանագրի համաձայն վերադարձվել է ՀՀ պետական բյուջե, իսկ մնացած 34,935.6 հազար ՀՀ դրամն ուղղվել է 2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը ՀՀ-ում կազմակերպելու համար անհրաժեշտ երաշխիքային գումարի վերջին չափաբաժնի վճարմանը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չի ընդունվում քանի որ

- առարկություններում և մեկնաբանություններում աղավաղվել է հաշվեքննողների կողմից արձանագրված անհամապատասխանությունը: Հաշվեքննողները չեն արձանագրել, որ *կազմակերպությունը Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պարտավոր էր ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ համաձայնեցնել միջոցառման մասնակցության վճարների հաշվին մուտքագրված գումարները*, այլ արձանագրել են, որ 2.3.4 կետի պահանջով դրանք առաջնահերթ պետք է ուղղվեն միջոցառման երաշխիքային կանխավճարի ամբողջ գումարի մարմանը ինչը չի կատարվել: Իսկ կատարված ծախսերը չեն համաձայնեցրել Նախարարության հետ:

- Որևէ գումար չի ուղղվել միջոցառման երաշխիքային կանխավճարի գումարի մարմանը և երաշխիքային կանխավճարի գումարը ոչ մի լումայով չի մարվել ինչին մանրամասն անդրադարձ է կատարվել 7.1 խեղաթյուրման մեջ:

- Նախարարության հետ միջոցառման մասնակցության վճարների հաշվին մուտքագրված գումարների ծախսման համաձայնեցման պահանջը սահմանված է պայմանագրի 2.3.8 կետով: Հաշվեքննողի կողմից արձանագրությունում մեխանիկորեն բաց է թողնվել պայմանագրի նշված կետին հղում տալը: Համաձայն 2.3.8 կետի պահանջի միջոցառման մասնակցության վճարների, հովանավորչական փաթեթներից գոյացած գումարների և ներգրաված այլ դրամական միջոցների մուտքագրման համար պետք է բացվեն բանկային երկու հաշվեհամարներ և այդ

հաշիվներից ելքագրումները պետք է իրականացվեն Պետական մարմնի գրավոր համաձայնությամբ:

6.2 (1043-11002) Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագիր

6.2.1 (1043-11002) Առկա է անհամապատասխանություն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի միջև 11.07.2017 թվականին կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 5 պայմանագրի 2.2.3 կետի պահանջի հետ

Համաձայն պայմանագրի 2.2.3 կետի պահանջի կազմակերպությունն իրավունք ունի առանց պետական մարմնի համաձայնության պայմանագրի հավելված 2-ի ծախսային հոդվածներով նախատեսված գումարների միջև կատարել ներհոդվածային վերաբաշխում տվյալ միջոցառման համար նախատեսվող ընդհանուր գումարի մինչև 10 (տասը) տոկոսի սահմաններում:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի միջև 11.07.2017 թվականին կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 5 պայմանագիրը՝ 149,595.4 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված թիվ 2-ով՝ ծրագրով նախատեսված միջոցառումների ծախսերի նախահաշվով «Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության իրականացում» միջոցառման գումարը սահմանվել է 72,772.00 հազ. դրամ, իսկ «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության իրականացում» միջոցառման գումարը սահմանվել է 76,823.40 հազ. դրամ:

Առանց պետական մարմնի համաձայնության, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրենի 06.11.2017 թվականին թիվ 268 Լ հրամանով կատարվել է հավելված 2-ով սահմանված միջոցառումների ծախսային հոդվածների միջև ներհոդվածային վերաբաշխում, որով «Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության իրականացում» միջոցառմամբ կատարվել է 16,420.0 հազ. դրամի վերաբաշխում, ինչը կազմում է միջոցառման համար նախատեսված ընդհանուր գումարի 22.6 տոկոսը, իսկ «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության իրականացում» միջոցառմամբ 11,852.60 հազ. դրամի

վերաբաշխում ինչը կազմում է միջոցառման համար նախատեսված ընդհանուր գումարի 15.4 տոկոսը:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Հաշվեքննողն ուսումնասիրելով «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագրի» իրականացման համար ՀՀ պետական բյուջեից նախարարությանը դրամաշնորհի տեսքով 2017, 2018 և 2019 թվականներին հատկացված ֆինանսական միջոցների ծախսման ճշտությունը՝ արձանագրել է, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի միջև տարբեր տարիներին կնքված պայմանագրերում սահմանված է դրույթ, որի համաձայն, հիմնադրամի տնօրենն իրավունք չունի ծախսային հոդվածների ներհոդվածային վերաբաշխումներ իրականացնել, եթե այդ վերաբաշխումները գերազանցում են հատկացվող ընդհանուր գումարի 10%-ը: Պայմանագրերի այդ դրույթի կարգավորման շրջանակներում Հաշվեքննողը հաշվարկել է տարբեր տարիների ընթացքում իրականացված ներհոդվածային վերաբաշխումների «շեղումները» և ներկայացրել այդ ամենը որպես անհամապատասխանություն կամ խեղաթյուրում:

Այս բաժնի պարզաբանումները մեծապես բխում են մեր՝ վերոգրյալով շարադրված այն դիտարկումից, որ Հաշվեքննողի կողմից սխալ հղումներ կատարելը, գործընթացի իրականացման տարբեր մեխանիզմների իմաստը սխալ ընկալելը կամ ներկայացնելը կարող է հանգեցնել ընդհանուր գործընթացի վերաբերյալ այլոց կամ նույն Հաշվեքննողի սխալ եզրահանգմանը: Զորօրինակ կարող ենք նշել հենց ներհոդվածային վերաբաշխումներին վերաբերող 10% սահմանաչափի հաշվարկման մեխանիզմը:

Խնդիրը կայանում է հետևյալում. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի միջև տարբեր տարիներին կնքված պայմանագրերում սահմանված է դրույթ, որի համաձայն կազմակերպությունն իրավունք ունի կատարել ծախսային հոդվածների ներհոդվածային վերաբաշխումներ, սակայն այդ վերաբաշխումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի կազմակերպությանը հատկացվող ծրագրի ընդհանուր գումարի 10%-ը, իսկ գերազանցելու դեպքում կազմակերպությունը պետք է գործընթացը համաձայնեցնի նախարարության հետ: Այսինքն՝ ակնհայտ է, որ սահմանված 10% սահմանաչափը վերաբերում է ոչ թե ծախսային առանձին հոդվածներին, այլ ծրագրի համար հատկացվող ընդհանուր գումարին: Հաշվեքննողը սխալ մեկնաբանելով կամ ընկալելով այս կարգավորման

տրամաբանությունը հաշվարկել է տարբեր տարիներին ծախսային առանձին հոդվածների գծով վերաբաշխումների գերազանցումը 10 % սահմանաչափի նկատմամբ, այն դեպքում, երբ ընդհանուր վերաբաշխումների չափը չի գերազանցել ծրագրով նախատեսված ընդհանուր գումարի 10 %:

Վերոգրյալով պայմանավորված ակնհայտ է, որ այստեղ չկա որևէ շեղում կամ անհամապատասխանություն կամ խեղաթյուրում, քանի որ կատարված բոլոր վերաբաշխումները համապատասխանում են պայմանագրերի դրույթներով սահմանված կարգավորումներին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Առարկությունները ընդունվել են 2018 թվականների և 2019 թվականների համար և չի ընդունվել 2017 թվականի համար, քանի որ ի տարբերություն 2018թ և 2019թ կնքած պայմանագրերի 2017թ.-ի պայմանագրով սահմանվել է, որ կազմակերպությունը առանց պետական մարմնի համաձայնության պայմանագրի հավելված 2-ի ծախսային հոդվածներով նախատեսված գումարների միջև կարող է կատարել ներհոդվածային վերաբաշխում ոչ թե **ծրագրի համար հատկացվող ընդհանուր** գումարի մինչև 10 տոկոսի սահմաններում այլ **տվյալ միջոցառման համար նախատեսվող** ընդհանուր գումարի մինչև 10 (տասը) տոկոսի սահմաններում:

6.2.2 Առկա է անհամապատասխանություն Նախարարության և ՁԻՀ-ի միջև 2017-2019 թվականներին կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերի 2.3.2 կետի պահանջների հետ:

Ըստ 2017-2019 թվականներին կնքված պայմանագրերի 2.3.2. կետի. «պետական մարմինը պարտավոր էր կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ», սակայն Նախարարության կողմից մոնիթորինգային ուսումնասիրություններ չեն կատարվել:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Հարկ է նկատել, որ Հաշվեքննողն իր արձանագրումը կատարելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ պայմանագրային պարտավորություն հանդիսացող ծրագրի մոնիթորինգի իրականացումը տեղի է ունենում կա՛մ Նախարարությունում հաստատված մոնիթորինգի իրականացման կարգին համապատասխան, կա՛մ վերջինիս բացակայության պայմաններում պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների համար նախընտրելի արդյունավետ եղանակով: Արձանագրենք, որ Նախարարությունը տվյալ ժամանակահատվածում մոնիթորինգի

իրականացման հաստատված կարգ չի ունեցել, այդ պատճառով պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներն իրականացրել են մշտադիտարկումներ և/կամ դիտանցումներ՝ ապահովելով իրականացվող ծրագրի մոնիթորինգի իրականացումը իրենց համար նախընտրելի արդյունավետ եղանակով: Օրինակ, Նախարարության գլխավոր քարտուղարի 25.07.2019թ-ի N286-Ա հրամանով Նախարարության 3 աշխատակիցներ գործուղվել են Գյումրի քաղաք՝ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ընթացիկ աշխատանքների ստուգման նպատակով (հրամանը կցվում է):

Պետք է նշել նաև, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրամանով Նախարարությունում սահմանվել է մոնիթորինգի իրականացման կարգ՝ Նախարարության հետ կնքված և կնքվող պայմանագրերի շրջանակում մոնիթորինգի կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չի ընդունվում, քանի որ մոնիթորինգի իրականացումը հիմնավորող և հավաստող որևէ փաստաթուղթ հաշվեքննողներին և ներկայացրած առարկություններին և բացատրություններին կից չի ներկայացվել: Նախարարության գլխավոր քարտուղարի հրամանը Նախարարության աշխատակիցներին Գյումրի քաղաք գործուղել՝ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ընթացիկ աշխատանքների ստուգման նպատակով մոնիթորինգի իրականացումը հավաստող փաստաթուղթ չի կարող հանդիսանալ քանի որ

- Գյումրի քաղաք գործուղվելով հնարավոր չէ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության ընթացիկ աշխատանքները ստուգել:

- Գործուղման հրամանի առկայությունը ինքնին դեռևս չի փաստում, որ ստուգումն իրականացվել է: Չի ներկայացվել ստուգման արդյունքներով կազմված որևէ փաստաթուղթ:

Բացի այդ, համաձայն պայմանագրի 3.1 կետի պետական մարմինը մոնիթորինգը իրականացնում է ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով: Նախարարության որևէ ստորաբաժանման կամ աշխատակցի կողմից մոնիթորինգի արդյունքում կազմված ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման որևէ փաստաթուղթ հաշվեքննողներին, ինչպես նաև առարկություններով և բացատրություններով չի ներկայացվել:

6.3 Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ ծրագիր

6.3.1 Առկա է անհամապատասխանություն «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 9, 10, 12 և 15 պայմանագրերի 3.1 կետի պահանջների հետ:

«Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 9, 10, 12 և 15 պայմանագրերի 3.1 կետով սահմանվում է, որ պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

2018 և 2019 թվականների «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ԲՏԱՆ-ը կնքել է «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագիր թիվ 10-ը՝ 15,000.00 հազ. դրամ արժեքով, «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» (ԻՏՁՄ) հիմնադրամի հետ, պայմանագիր թիվ 9-ը՝ 76,460.00 հազ. դրամ արժեքով, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) հետ, պայմանագիր թիվ 12-ը՝ 19,774.00 հազ. դրամ արժեքով, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) հետ և պայմանագիր թիվ 15-ը՝ 15,000.00 հազ. դրամ արժեքով, «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» (ԱՏՁՄ) ՀԿ-ի հետ:

ՀՀ ԲՏԱՆ-ը թիվ 9, 10, 12 և 15 պայմանագրերի մասով մոնիթորինգ չի իրականացրել:

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ և բացառություններ չի ներկայացրել

6.3.2 Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի հետ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված 1-ին մասով սահմանվում է, որ սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների (ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետության կամ համայնքների հիմնարկներ) կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու

գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն գնում է հանդիսանում պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը:

ՀՀ ԲՏԱՆ նախարարի 12.11.2019-ի N 736-Ա հրամանով հաստատված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2019 թվականի ծրագրով նախատեսվել է հատկացված 149,000.0 հազ. դրամը օգտագործել 6 միջոցառումների համար՝

- **«Դիջիթեք 2019» ցուցահանդեսի տաղավարների պատրաստում** (բյուջեից ֆինանսավորման չափը՝ 30,000.0 հազ. Դրամ, վճարված գումար՝ 29,000. 0 հազ. Դրամ),

- **Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի նախարարական կլոր սեղան քննարկման շրջանակում միջոցառումների իրականացում** (բյուջեից ֆինանսավորման չափը՝ 50,000.0 հազ. Դրամ, վճարված գումար՝ 24,802. 4 հազ. Դրամ),

- **«Innoweek.uz 2019» նորարարական և ներդրումային համաժողովի մասնակցություն** (բյուջեից ֆինանսավորման չափը՝ 14,000.0 հազ. Դրամ, վճարված գումար՝ 9,702. 6 հազ. Դրամ),

- **«Singapore Week of Innovation and TeCHnology (SWITCH)» ցուցահանդեսին մասնակցություն** (բյուջեից ֆինանսավորման չափը՝ 39,400. 0 հազ. Դրամ, վճարված գումար՝ 25,928. 5 հազ. Դրամ),

- **«QITCOM» ցուցահանդեսին մասնակցություն** (բյուջեից ֆինանսավորման չափը՝ 15,000. 0 հազ. Դրամ, վճարված գումար՝ 13,000. 0 հազ. Դրամ)

- **ՀԱՊՀ «ANEL» ինժեներական լաբորատորիայի ուսանողական խմբին ֆինանսական աջակցություն** (բյուջեից ֆինանսավորման չափը՝ 600. 0 հազ. Դրամ, վճարված գումար՝ 600. 0 հազ. Դրամ):

Նշված միջոցառումներից «Դիջիթեք 2019» ցուցահանդեսի տաղավարների պատրաստում, «Innoweek.uz 2019» նորարարական և ներդրումային համաժողովի մասնակցություն, «Singapore Week of Innovation and TeCHnology (SWITCH)» ցուցահանդեսին մասնակցություն և «QITCOM» ցուցահանդեսին մասնակցություն միջոցառումների շրջանակներում 14 պայմանագրեր կնքվել են որպես գնում չհանդիսացող ծախս, որոնք սակայն այդպիսին չեն համարվում:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրումները

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարվող այսպիսի գնումները պետական բյուջեի կատարումն ապահովելու գործընթացում ներկայացվում են որպես գնում չհանդիսացող ծախս և բնականաբար Նախարարության կողմից չէր կարող ընտրվել գնման որևէ ընթացակարգ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Առաջին՝ նշված գնումները ՀՀ տարածքից դուրս կատարվող գնումներ չեն, քանի որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի գնումը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարվող, եթե պայմանագիրը կնքվում և դրա շրջանակում ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք են բերվում ու օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, իսկ տվյալ պարագայում պայմանագրերը կնքվել են ՀՀ տարածքում:

Երկրորդ՝ անգամ եթե նշված գնումները դիտարկենք որպես ՀՀ տարածքից դուրս իրականացվող, ապա գնումները պետք է առնվազն իրականացվեին մեկ անձից գնման ընթացակարգով, քանի որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

6.3.3 Առկա է անհամապատասխանություն ցուցահանդեսի անցկացման և այդ ցուցահանդեսի տաղավարի նախագծման մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների կատարման ժամկետների միջև

Դիջիտեք 2019 թվականի ցուցահանդեսի տաղավարի նախագծման, մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների կատարման համար 22.10.2019 թվականին Ա.Ձ Էդուարդ Լևանյանի հետ կնքվել է ծառայությունների մատուցման թիվ ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/13 պայմանագիրը՝ գումարով 8,000.0 հազ. դրամ: Պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվել է 22.10.2019 թվականին, իսկ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման թիվ 9239124490 հաշիվ վավերագիրը դուրս է գրվել 22.10.2019 թվականին:

Անհրաժեշտ է նշել, որ «Դիջիտեք 2019» ցուցահանդեսը տեղի է ունեցել 06.10.2019–09.10.2019 թվականը ընկած ժամանակահատվածում, իսկ այդ ցուցահանդեսի անցկացման համար տաղավարի նախագծման մոնտաժման և աշխատանքների կատարման պայմանագիրը կնքվել և այդ աշխատանքների

ընդունումն-հանձնումն իրականացվել է 22.10.2019 թվականին ցուցահանդեսի ավարտից 13 օր ուշ: Ընդ որում՝ պայմանագիրը չի պարունակում դրույթ, որ պայմանագրի պայմանները տարածվում են 2019 թվականի հոկտեմբերի 6-ից կողմերի միջև ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

Նախարարության կողմից չի ներկայացվել Ա.Ձ Էդուարդ Լևանյանի կողմից կազմված նախագիծը, կատարված մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների նախահաշիվը:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

6.3.4 Առկա է անհամապատասխանություն «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/18», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/23», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/22», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/20», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/21», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/24», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/19», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/26» պայմանագրերի 4.2 կետի պահանջի հետ:

«ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/18», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/23», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/22», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/20», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/21», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/24», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/19», «ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/26» պայմանագրերի 4.2 կետի պահանջով սահմանվում է, որ դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N2) նախատեսված չափերով և ամիսներին:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» ծրագրի՝ «Singapore Week of Innovation and TeCHnology (SWITCH)» ցուցահանդեսին մասնակցություն միջոցառման շրջանակներում կնքվել են պայմանագրեր 9 կազմակերպությունների հետ (The Gurus LLC, Quality Testing Lab, Expper Technologies, Era Technologies LLC, Ginosi Hotel Management technology and services, DevNet, YEA Engineering LLC, AdDvice LLC, EasyDMARC), որոնց տրամադրվել է տարածք ցուցահանդեսին մասնակցության համար: Ցուցահանդեսին մասնակցող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (8 հոգի) առանձին կնքվել են պայմանագրեր (ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/18, ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/23, ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/22, ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/20, ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/21, ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/24, ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/19, ԲՏԱՆ-ԳԶԾ-2019/26) ըստ որոնց վերջիններս ստանձնել են 2019թ. նոյեմբերի 11-ից 15-ը Սինգապուրում կայանալիք «SWITCH» ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքների կատարման պարտավորությունը, և այս պայմանագրերի հիման վրա ՀՀ ԲՏԱՆ-ը փոխհատուցել է նշված մասնակիցների ճանապարհաձախսն ու գիշերակացի ծախսերը (ընդհանուր՝ 2,017. 00 հազ. դրամ):

Հանձման-ընդունման արձանագրությունները, որոնց հիման վրա պետք է իրականացվեն գումարների փոխանցումը համաձայն պայմանագրերի 4.2 կետերի. «դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա», չեն կազմվել:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«... ինչ վերաբերում է ցուցահանդեսին մասնակցող կազմակերպությունների ներկայացուցիչների ճանապարհածախսի և գիշերակացի ծախսերն առանց հանձման-ընդունման արձանագրությունների փոխանցելուն, ապա հայտնում ենք, որ գումարների փոխանցումները կատարվել են համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, իսկ հանձման-ընդունման արձանագրությունների կազմման պահանջ ենթադրող դրույթի առկայությունը պայմանագրերում համարվում է տեխնիկական բնույթի խնդիր՝ ելնելով տրիպային պայմանագրերի տարբեր գործընթացներում օգտագործելու պրակտիկայից»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

Հաշվեքննվողը չի առարկում հանձման-ընդունման արձանագրությունների բացակայությանը:

6.4 (1100-31001) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում ծրագիր

6.4.1 (1100-31001) Առկա է անհամապատասխանություն «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի հավելված N1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» հետ:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի հավելված N1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով» ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 20.12.2019:

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ԲՏԱՆ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կնքվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման» պայմանագիրը, ըստ որի վաճառողը պարտավորվել է մատակարարել 2 ցանցային սերվեր (2*4,770.00=9,540.00 հազ. դրամ), 1 ցանցային բաժանարար (88.00 հազ. դրամ), 2 հեռահաղորդակցության սարքեր (2*55.00=110.00 հազ. դրամ):

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» մատակարարման ժամկետի համար արված հղման մեջ նշվում է. «*/հաշվի առնելով, որ ապրանքների մատակարարումը կարող է տեղափոխվել 2020թ. (միննույն ժամանակ պահպանելով 40 օրացուցային օրը), այդ իսկ պատճառով պատվիրատուն նախատեսում է տրամադրել 100% կանխավճար»։ Հաշվի առնելով, որ ապրանքի մատակարարման ժամկետը նշված է մինչև 20.12.2019՝ կատարված հղումը այն մասին, որ ապրանքների մատակարարումը կարող է տեղափոխվել հաջորդ տարի, անբովանդակ է։

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«Արդյունքում այս բաժնի վերաբերյալ Արձանագրության մեջ տեղ գտած անհամապատասխանությունները տեխնիկական բնույթի են, որոնք չեն հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ուրնահարմանը»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

Հաշվեքննվողը անհամապատասխանության առկայությանը չի առարկում:

6.4.2 (1100-31001) Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված 3-րդ մասի պահանջի հետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված 3-րդ մասով սահմանվում է, որ ընտրված մասնակիցը կանխավճարի ապահովումը պատվիրատուին ներկայացնում է նախապես:

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ԲՏԱՆ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կնքվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման» պայմանագիրը:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի 3.2 կետով սահմանվում է պայմանագրի գումարի 100%-ի չափով կանխավճար (9,738.00 հազ. դրամ), որը պետք է փոխանցվեր վաճառողի բանկային հաշվին: «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ ԲՏԱՆ-ին ներկայացրել է կանխավճարի ապահովում «Բանկային երաշխիք թիվ 19-0074-ը»՝ կնքված 18.12.2019-ին՝ պայմանագրի կնքումից 2 օր անց:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«Արդյունքում այս բաժնի վերաբերյալ Արձանագրության մեջ տեղ գտած անհամապատասխանությունները տեխնիկական բնույթի են, որոնք չեն հանգեցրել

գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ուրնահարմանը»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

Հաշվեքննվողը անհամապատասխանության առկայությանը չի առարկում:

6.4.3 (1100-31001) Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 1-ին մասի պահանջի հետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 1-ին մասով սահմանվում է, որ Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ԲՏԱՆ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կնքվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման» պայմանագիրը:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի շրջանակներում 18.12.2019-ին կնքվում է համաձայնագիր թիվ 1-ը, որի 1.1 կետով հաստատվում է համաձայնագրի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը»՝ ապրանքի մատակարարման նոր ժամկետ սահմանելով «համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրը» (18.12.2019-17.01.2020), իսկ 1.2 կետով սահմանում է 1.1 կետին հակասող ապրանքների մատակարարման նոր ժամկետ՝ հաշվելով 2019թ. դեկտեմբերի 20-ից սկսած 30 օրացուցային օր (20.12.2019-19.12.2020): Այսինքն՝ գնման առարկայի բնութագրերը հստակ չեն նկարագրում ապրանքի ձեռքբերման պայմանները:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«Արդյունքում այս բաժնի վերաբերյալ Արձանագրության մեջ տեղ գտած անհամապատասխանությունները տեխնիկական բնույթի են, որոնք չեն հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ուրնահարմանը»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

Հաշվեքննվողը անհամապատասխանության առկայությանը չի առարկում:

6.4.4 (1100-31001) Առկա է անհամապատասխանություն «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի 8.6 կետի պահանջի հետ:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի 8.6 կետով սահմանվում է, որ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի («Էյչ Գրուպ» ՍՊԸ) առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի (ՀՀ ԲՏԱՆ) մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի («Էյչ Գրուպ» ՍՊԸ) առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ:

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ԲՏԱՆ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կնքվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման» պայմանագիրը:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» պայմանագրի շրջանակներում 18.12.2019-ին կնքվում է համաձայնագիր թիվ 1-ը, որով երկարաձգվում է ապրանքի մատակարարման ժամկետը: «Էյչ Գրուպ» ՍՊԸ ժամկետի երկարաձգման առաջարկությունը ներկայացրել է ավելի ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը (20.12.2019) լրանալուց առնվազն 5 օրացուցային օրը:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«Արդյունքում այս բաժնի վերաբերյալ Արձանագրության մեջ տեղ գտած անհամապատասխանությունները տեխնիկական բնույթի են, որոնք չեն հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

Հաշվեքննվողը անհամապատասխանության առկայությանը չի առարկում:

6.4.5 (1100-31001) Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 5-րդ մասի պահանջի հետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 5-րդ մասով սահմանվում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ԲՏԱՆ և «Էյչ Գրուպ» ՍՊԸ միջև 2019 թվականի նոյեմբերի 26-ին կնքվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/4-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագիրը 9,234.00 հազ. դրամ ընդհանուր գումարով, այդ թվում՝ հեռախոսային ցանցի սարքեր 1 հատ (1,650.00 հազ. դրամ), անլար հեռախոսներ 15 հատ (1,800.00 հազ. դրամ):

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/4-1» պայմանագրի հավելված N1-ի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» հեռախոսային ցանցի սարքեր չափաբաժին 6-ի և անլար հեռախոսներ չափաբաժին 7-ի «ձեռքբերվող ապրանքի բնութագիր» սյան համապատասխան վանդակում նշվել է պահանջվող սարքերի ֆիրմային անունը և մոդելը (Պանասոնիկ SԴԱ-600):

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«Հաշվեքննողի այն դիտարկմանը, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի խախտմամբ ձեռք է բերվել Պանասոնիկ KX-DT543X մոդելի սարք, հայտնում ենք, որ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» ֆիրմային անվանը և մոդելին հղում կատարելն անխուսափելի էր, քանի որ ցանցն ընդհանուր կառուցված էր հենց այդ ֆիրմայի ապրանքների օգտագործմամբ»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 5-րդ մասի. «Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»: Նշված պահանջը չի պահպանվել:

Հաշվեքննողը իր շարադրանքում անհամապատասխանությունը նկարագրելիս «խախտում» բառը չի օգտագործել և չի տվել որակումներ:

6.5 Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահութաբաժիններ

Առկա է անհամապատասխանություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին մասի պահանջի հետ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին մասի և կանոնադրության համաձայն ընկերությունը պետք է ստեղծեր

պահուստային հիմնադրամ կանոնադրությամբ սահմանված կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Վերահսկվող ժամանակահատվածում **«Վարչատնտեսական» ՓԲ** ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծված պահուստային հիմնադրամը կազմել է կանոնադրական կապիտալի 2.2 տոկոս, կանոնադրությամբ սահմանված 15 տոկոսի փոխարեն:

7. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

7.1 2019թ տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագիր

7.1.1 (1043-11003) «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» «ԱՏՁՄ» ՀԿ-ի հետ կնքած պայմանագրում և համաձայնագրերում ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.60 հազ. դրամի չափով պայմանագրային պարտավորությունը վերացնելու փոփոխություններ չկատարելու և այն չներելու պարագայում այդ պարտավորությունը համարվել է մարված:

2019 թվականի տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպում միջոցառումը պատշաճ կերպով իրականացնելու և երաշխիքային կանխավճարի մնացած մասի մուծումը իրականացնելու նպատակով 2019 թվականի մայիսի 10-ին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «ԱՏՁՄ» ՀԿ-ի միջև կնքվել է «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 14 պայմանագիրը:

Պայմանագրի 2.3.3 կետի պահանջի մինչև 2019 թվականի հոկտեմբերի 30-ը համաժողովի մասնակիցներից հավաքագրված մուտքավճարներից (մասնակցության վճարներից), հովանավորչական փաթեթներից և այլ ներգրավված գումարներից «ԱՏՁՄ» ՀԿ-ն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նշված հաշվեհամարին ՀՀ պետական բյուջե պետք է փոխանցեր տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային այլանսին (WITSA) անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի իրականացումն ապահովելու նպատակով պետության կողմից կազմակերպությանը փոխանցված գումարներն ամբողջությամբ, որը կազմում է 750,000.00 ԱՄՆ դոլար (362,049.00 հազ. դրամ):

2019 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագրի իրականացման համար տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային այլանսին (WITSA) անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի իրականացումն ապահովելու նպատակով պետության կողմից «ԱՏՁՄ» ՀԿ-ին, որը համարվում է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության իրավահաջորդը, 2015-2019թթ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական

աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերով հատկացվել է 750,000.00 ԱՄՆ դոլար (362,049.00 հազ. դրամ)

«ԱՏՁՄ» ՀԿ-ն տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային ալյանսին անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի իրականացումն ապահովելու նպատակով պետության կողմից կազմակերպությանը փոխանցված գումարները պետական բյուջե չվճարելու համար, 2019 թվականի հոկտեմբերին գրությամբ դիմել է ՀՀ փոխվարչապետ Տ. Ավինյանին, որով մեկնաբանել է, որ ՏՏՀՀ 2019 կազմակերպման օրերին մշակութային միջոցառումների ծախսերը գերազանցել են 710,000.00 հազ. դրամը (պետական բյուջեով դրա համար տրամադրվել է 450,000.00 հազ. դրամ), իսկ ընդհանուր ծախսերը կազմել է 2,500,000.00 հազ. դրամ: ՀՀ փոխվարչապետից խնդրել է թույլ տալ 2019 թվականի մայիսի 10-ին կնքված թիվ 14 պայմանագրի 2.3.3 կետով նշված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային ալյանսին» (WITSA) անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի իրականացումն ապահովելու նպատակով պետության կողմից կազմակերպությանը փոխանցված գումարները՝ 348,530.60 հազ. դրամ ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունը վերախմբագրել նոր բովանդակությամբ, առաջարկելով կազմակերպության կողմից այդ գումարները չվերադարձվեն և դրանց հաշվին կատարվեն այլ պարտավորություններ:

ՀՀ փոխվարչապետը 01.11.2019 թվականին «ԱՏՁՄ» ՀԿ-ի գրությունը ուղարկվել է ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարին՝ խնդրելով ուսումնասիրել, սահմանված կարգով ընթացք տալ և արդյունքների մասին տեղեկացնել:

Չնայած ի պատասխան ՀՀ փոխվարչապետի գրությանը ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության և ՀՀ ֆինանսների նախարարների պատասխաններին, որ «ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից առաջարկվող փոփոխություն կատարելը խնդրահարույց է մի շարք իրավական ակտերի դրույթների (ՀՀ բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 1.2 –րդ հոդվածի 2-րդ, 9-րդ և 10-րդ մասեր, 8-րդ հոդվածի 7-րդ մաս, «ՀՀ 2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 17-րդ կետ) և ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության տեսանկյունից, քանի որ այն չի բխում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով ամրագրված արդյունավետության և օգտավետության սկզբունքների էությունից, ՀՀ կառավարությունը 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1927-Ն որոշմամբ **թույլատրել է** նախարարության և «ԱՏՁՄ» ՀԿ-ի միջև 10.05.2019 թ. կնքված պայմանագրում և ՀՀ վարչապետի

14.03.2019 թվականի թիվ 238-Լ որոշման 2-րդ կետի համաձայն կնքված համաձայնագրում փոփոխություններ կատարելու միջոցով «ԱՏՁՄ» ՀԿ-ին ներել 2015-2019 թվականների «Տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային պլանսին» (WITSA) երաշխիքային կանխավճարն իրականացնելու նպատակով պետության կողմից տրամադրված և դեռևս ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.60 հազ. դրամի չափով պայմանագրային պարտավորությունը:

ՀՀ վարչապետի 14.03.2019թ-ի թիվ 238-Ն որոշման և 2019 թվականի մայիսի 10-ին «ԱՏՁՄ» ՀԿ-ի և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջև «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» կնքված **թիվ 14 պայմանագրում համապատասխան փոփոխություններ չի կատարվել**, սակայն գումարը համարվել է ներված, իսկ պարտավորությունը մարված:

Հարկ է նշել, որ առկա են անհամապատասխանություններ «ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից ՀՀ փոխվարչապետին ուղղված գրության մեջ նշված ծախսային ցուցանիշների և ՀՀ ԲԱՏ նախարարին ուղղված գրությամբ ներկայացրած ծախսերի և եկամուտների վերաբերյալ տեղեկանքում արտացոլված ծախսային ցուցանիշների միջև: Մասնավորապես ծախսերի և եկամուտների վերաբերյալ ներկայացրած տեղեկանքում կազմակերպության ծախսերը ցույց է տրվել 1,997,531.10 հազ. դրամ՝ գրության մեջ 2,500,000.00 հազ. դրամ, ընդհանուր վաճառված տոմսերից գոյացած գումարը տեղեկանքում ցույց է տրվել 217,300.00 հազ. դրամ՝ գրության մեջ 225,800.00 հազ. դրամ, համերգի կազմակերպման ծախսերը տեղեկանքում ցույց է տրվել 620,000.00 հազ. դրամ՝ գրության մեջ 710,000.00 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Հարկ է ընդգծել, որ Հաշվեքննողը 750,000.00 ԱՄՆ դոլարի չվերադարձնելու հանգամանքների ուսումնասիրությամբ արդեն իսկ Արձանագրության այս բաժնի մյուս փաստական տվյալների նկարագրման ժամանակ արձանագրում է, որ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1927-Ա որոշմամբ և դրա հիման վրա համապատասխան համաձայնագրերում և պայմանագրում կատարված փոփոխության արդյունքում ներվել է 2015-2019 թվականների Տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային Ալյանսին (WITSA) երաշխիքային կանխավճարն իրականացնելու նպատակով պետության կողմից տրամադրված և դեռևս ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.60 հազար դրամի պայմանագրային պարտավորությունը...:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չի ընդունվում, քանի որ առարկությունում նշվածը չի համապատասխանում իրականությանը, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1927-Ա որոշմամբ պայմանագրում և համաձայնագրերում չի կատարվել փոփոխություն և ՀՀ պետական բյուջե չվերադարձված գումար չի ներվել: Բացի այդ արձանագրությունում որևէ տեղ հաշվեքննողի կողմից չի արձանագրվել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1927-Ա որոշմամբ և դրա հիման վրա համապատասխան համաձայնագրերում և պայմանագրում կատարված փոփոխության արդյունքում ներվել է ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.60 հազ. դրամի պայմանագրային պարտավորությունը: Հակառակը՝ հաշվեքննողը փաստական տվյալների նկարագրման ժամանակ արձանագրել է, որ ՀՀ կառավարությունը 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1927-Ա որոշմամբ ընդամենը թույլատրել է նախարարությանը պայմանագրում և համաձայնագրում փոփոխություններ կատարելու միջոցով «ԱՏՁՄ» ՀԿ-ին ներել ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.60 հազ. դրամի չափով պայմանագրային պարտավորությունը, սակայն Նախարարությունը չի օգտվել այդ թույլտվությունից՝ իրավունքից և պայմանագրում և համաձայնագրում չի կատարել փոփոխություններ և ՀԿ-ին չի ներել ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.60 հազ. դրամի չափով պայմանագրային պարտավորությունը, սակայն պարտավորությունը համարել է մարված:

7.2 (1100-31001) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում ծրագիր

7.2.1 (1100-31001) Զննությամբ տեղում բացակայել են պայմանագրով պատվիրված և հանձնման-ընդունման արձանագրություններով ընդունված թվով 80 հատ ամբողջական մետաղական գրասենյակային աթոռները գումարով 1,920.00 հազ. դրամի:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-1» պայմանագրի 1.1 կետով սահմանվում է, որ Վաճառողը («Արգավանդ Կահույք» ՍՊԸ) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին (ՀՀ ԲՏԱՆ) մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը (ՀՀ ԲՏԱՆ) պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ԲՏԱՆ-ի և «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքվել «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագիրը, ըստ որի վաճառողը պարտավորվում է ՀՀ ԲՏԱՆ-ին մատակարարել 70 հատ աթոռ և 80 հատ գրասենյակային աթոռ:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-1» պայմանագրի՝ «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման» արձանագրություն N1-ի՝ 2-րդ չափաբաժնով (աթոռ գրասենյակային) 23.12.2019-ին մատակարարվել են 80 գրասենյակային աթոռ՝ ամբողջությամբ մետաղական՝ նիկելապատ, արմնակալները՝ բնական փայտ, մեջքը ցանցային կտոր թափանցիկ, սակայն տեղում զննության ժամանակ նշված աթոռները չեն ներկայացվել:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ Հաշվեքննողին տեղում զննության ժամանակ 80 հատ գրասենյակային աթոռ չի ներկայացվել, ապա հայտնում ենք, որ այդ աթոռները ներկայացվել են և կարծում ենք «չի ներկայացվել» եզրույթը խմբագրման կարիք ունի, այլապես ստացվում է, որ այդ աթոռներն ընդհանրապես չկան»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

Չի ընդունվում, քանի որ հաշվեքննողները արձանագրությունում արձանագրել են, որ չի ներկայացվել ոչ թե 80 հատ գրասենյակային աթոռ այլ «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման» արձանագրություն N1-ի՝ 2-րդ չափաբաժնի տեխնիկաագրին համապատասխանող 80 հատ ամբողջությամբ մետաղական՝ նիկելապատ, արմնակալները՝ բնական փայտից, մեջքը ցանցային թափանցիկ կտորից գրասենյակային աթոռներ: Այդ աթոռները տեղում ընդհանրապես չկային:

7.2.2 (1100-31001) Զննությամբ տեղում բացակայել են պայմանագրով պատվիրված և հանձնման-ընդունման արձանագրություններով ընդունված թվով 15 հատ անլար հեռախոսներ գումարով 1,800.00 հազ, դրամի:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/4-1» պայմանագրի 1.1 կետով սահմանվում է, որ Վաճառողը («Էյ Ջրուպ» ՍՊԸ) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին (ՀՀ ԲՏԱՆ) մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը (<< ԲՏԱՆ) պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» ծրագրի իրականացման շրջանակներում << ԲՏԱՆ և «Էյչ Գրուպ» ՍՊԸ միջև 2019 թվականի նոյեմբերի 26-ին կնքվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/4-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագիրը 9,234.00 հազ. դրամ ընդհանուր գումարով, այդ թվում՝ անլար հեռախոսներ 15 հատ (1,800.0 հազ. դրամ):

Անլար հեռախոսներ չափաբաժին թիվ 7-ի դիմաց փաստացի զննության արդյունքում պարզվել է, որ ըստ ներկայացրած հեռախոսների 17.12.2019-ին մատակարարվել են Պանասոնիկ KX-DT543X մոդելի սարքեր, որոնք սակայն անլար չեն:

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ և բացառություններ չի ներկայացրել:

7.3 Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահութաբաժիններ

6.3.1 «Վարչատնտեսական» ՓԲ ընկերության կողմից 2017թ-ին 682.4 հազ. դրամի պակաս շահաբաժին է վճարվել պետական բյուջե:

2017 թվականին «Վարչատնտեսական» ՓԲ ընկերության կողմից ներկայացրած 2016 թվականի հաշվետվությունների համաձայն 2016 թվականի տարեկան իրացումից հասույթը կազմել է 104,608.0 հազ.դրամ, ծախսերը 104,468.0 հազ. դրամ, զուտ շահույթը 112.0 հազ. դրամ, շահութաբաժնի հաշվարկման բազան 112.0 հազ. դրամ, հաշվարկված շահութաբաժինը 56.0 հազ. դրամ:

Ընկերության կողմից հաշվի չի առնվել << կառավարության 22.06.2006թ. թիվ 1238 որոշման 5-րդ կետի պահանջները և շահութաբաժնի հաշվարկման նպատակով որպես ծախս է ընդունել նախարարության համար կատարված հաշվետու տարվա համախառն եկամտի 1 տոկոսը գերազանցող ներկայացուցչական ծախսերը՝ գումարով 1,364.9 հազ. դրամ, արդյունքում պակաս շահութաբաժին է վճարել պետական բյուջե 682.4 հազ. դրամ:

8. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

8.1 (1043-11003) 2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագիր

8.1.1 Նախարարությունը չի օգտվել «ԱՏՁՄ» ՀԿ-ի հետ 2019թ-ի մայիսի 10-ին կնքված համաձայնագրի 6.1, 6.2 և 6.4 կետերով իրեն վերապահված իրավունքներից՝ «ԱՏՁՄ» ՀԿ-ից չի պահանջել և ստացել տեղեկատվություն համաժողովի մասնակիցներից հավաքագրված մուտքավճարների, հովանավորչական փաթեթների իրացումից և այլ ներգրավված միջոցներից ստացված դրամական միջոցների նպատակով բացված բանկային հաշիվների շարժի վերաբերյալ, չի պահանջել ծախսերն իրականացնել բացառապես ՀՀ վարչապետի 14.03.2019 թվականի թիվ 238-Լ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածում ներկայացված ուղղություններով, ինչպես նաև չի պահանջել «ՏՏՀՀ-2019» միջոցառման մասնակցության վճարների, հովանավորչական փաթեթներով մուտքագրված դրամական միջոցների, ներգրավված այլ գումարների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն:

8.2 (1043-11002) Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագիր

8.2.1 Ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման համար «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ պայմանագիր է կնքվել հաշվետու տարին սկսվելուց բավականին ուշ (2017 թվականի համար 11.07.2017թ, 2018 թվականի համար 08.05.2018թ, 2019 թվականի համար 23.04.2019թ), սակայն պայմանագրերով նախատեսվել է դրույթ (6.1 կետ), որ պայմանագրերը ուժի մեջ են մտնում կողմերի ստորագրման պահից և տարածվում է տարվա սկզբից ծագած հարաբերությունների վրա: Փաստացի, կազմակերպություն ծառայություն է մատուցել չունենալով միջոցառումների պլան և չափորոշիչներ, թե ինչ գործառույթներ պետք է իրականացնի, իսկ նախարարությունը ընդունել է այդ աշխատանքների կատարման համար ներկայացված հաշվետվությունները փաստաթղթավորելով, որ գործառույթների կատարման ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները:

8.3 Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ ծրագիր

8.3.1 Ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման համար 2017 թվականին «ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ պայմանագիր է կնքվել հաշվետու տարին սկսվելուց բավականին ուշ 11.07.2017թ, իսկ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» (ԻՏՁՄ) հետ 04.08.2017 թվականին: Փաստացի ընկերությունները ծառայություն են մատուցել չունենալով միջոցառումների պլան և չափորոշիչներ, թե ինչ գործառույթներ պետք է իրականացնեին, իսկ նախարարությունը ընդունել է այդ աշխատանքների կատարման համար ներկայացված հաշվետվությունները փաստաթղթավորելով, որ գործառույթների կատարման ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները: Մինչև կողմերի միջև պայմանագրի կնքումն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքները նախարարության կողմից ընդունվել է առանց հիմքի և առանց հիմնավորման վճարել դրա դիմաց:

8.3.2 «Դիջիտեք 2019» ցուցահանդեսի տաղավարի վարձակալության համար նախարարությունը «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի հետ 12.11.2019 թվականին կնքել է թիվ ԲՏԱՆ-ԳԶԾ- 2019/17 ծառայությունների մատուցման պայմանագիրը գումարով 21,000.00 հազ. դրամ: Պայմանագրի 7.1 կետի համաձայն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և պայմանները տարածվում են 2019 թվականի հոկտեմբերի 6-ից կողմերի միջև ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրի համաձայն նախարարությունը 06.10.2019թ.-ից 09.10.2019 թվականը ընկած ժամանակահատվածի համար «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ից «Երևան Էքսպո» կենտրոնի 1-ին հարկի տարածքից վարձակալել է 250 ք.մ տարածք, 1 ք.մ տարածքի գինը 84,000.00 դրամ արժեքով:

«Երևան Էքսպո» կենտրոնը, որը պատկանում է «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ն 25.09.2019 թվականից - 09.10.2019 թվականը ընկած ժամանակահատվածի համար վարձակալել է ամբողջ կենտրոնը իր հարակից տարածքներով (3300ք.մ.) 10,000.00 հազ. դրամ արժեքով, օրական 1 ք.մ.-ի համար 202 դրամ:

Նախարարության կողմից, «Երևան Էքսպո» կենտրոնի տարածքը վարձակալել է միջնորդված ձևով, 1 ք.մ-ի դիմաց վճարել է օրական 21,000.00 դրամ կամ նախարարությունը տարածքը վարձակալել է 103.9 անգամ ավելի թանկ:

8.3.3 29.10.2019 - 01.11.2019 թվականին Կատարում (ԴԱՀԱ) կայացած «QATAR IT GONFERENCE AND EXIBITION» 2019 ցուցահանդեսի տաղավարի նախագծման, մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների, 29.10.2019 - 31.10.2019 թվականին Ռիդքեյկստանում կայացած «Innoweek.uz 2019» ցուցահանդեսի կոնսոլիդացված տաղավարի կառուցապատման աշխատանքների և 11.11.2019-15.11.2019թթ Սինգապուրում կայանալիք Singapore Week of Innovation and Technology (SWITCH)» ցուցահանդեսի՝ նախարարության կոնսոլիդացված տաղավարի կառուցապատման աշխատանքների կատարման համար կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր գումարով համապատասխանաբար 13,000.00 հազ. դրամի, 8,249.00 հազ. դրամի և 15,000.00 հազ. դրամի:

Պայմանագրերով չեն նախատեսվել ձեռքբերված 16,461.00 հազար դրամի ապրանքների հետ վերադարձ: Առաջին երկու պայմանագրերով նախատեսվել է տաղավարի ուտիլիզացում և դրա համար հատկացվել է 490.00 հազ. դրամ:

8.3.4 Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի նախարարական կլոր սեղան-քննարկման միջոցառումների շրջանակներում պետք է նկարահանվեր համաժողովի մասին պատմող տեսահոլովակներ: Համաձայն 21.10.2019 թվականին «Դոմինո Փրոդաքշն» ՍՊ ընկերության հետ կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2019/24» պայմանագրի տեխնիկական բնութագրի հոլովակը պետք է բաղկացած լիներ 5 մասից, որից 4 հատը 1-2 րոպե տևողությամբ և հատուկ մշակված սցենարով, իսկ մեկ հատը 5 րոպե տևողությամբ: Հոլովակների նկարահանման համար ծախսը կազմել է 3,000.00 հազ.դրամ: Հաշվեքննողներին տրամադրվել է միայն 5 րոպե տևողությամբ հոլովակը, մնացած հոլովակները չեն տրամադրվել:

ԲՏԱՆ-ՄԱԱՊՁԲ-2019/03 21.10.2019թ-ին կնքված պայմանագրի շրջանակներում Արմեն Մանուկյան ԱԶ-ից ձեռք է բերվել 17 հատ 1մ-2մ չափի դրոշներ,մեկ հատի արժեքը 18.0 հազ. դրամ, շուկայի ուսումնասիրությամբ պարզվեց, որ 1մ-2մ չափի դրոշի արժեքը կազմել է 7.0 հազ. դրամ: Ընդ որում՝ պայմանագրի հավելված 1-ում՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» բացի դրոշի չափերից («Դրոշներ 1մx2մ»), ձեռք բերվող ապրանքի այլ հատկանիշներ նշված չեն:

8.4 «Ներուժ» սփյուռքահայ երիտասարդների սթարթափ ծրագիր

«Ներուժ» սփյուռքահայ երիտասարդների սթարթափ ծրագրի» իրականացման շրջանակներում 2019 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ ԲՏԱՆ-ի և «ԲԱՆԱ ներդրողների աջակցության» ՀԿ-ի միջև կնքվել է «Ներուժ» սփյուռքահայ երիտասարդների սթարթափ ծրագրի իրականացման և կազմակերպման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության» պայմանագիր՝ գումարով 80,000.90 հազ.դրամ: Պայմանագրի նախատեսվել է իրականացնել երկու միջոցառում:

1. Ծրագրի շրջանակներում հաղթած սթարթափներին տրամադրվող պետական դրամաշնորհ՝ 64,800.00 հազ. դրամ:

2. Հետագա արքեկերացիոն ծրագրերի իրականացում ծրագրի մասնակիցների համար (վերջիններիս ընտրությունը ՀՀ ԲՏԱՆ հետ համաձայնությամբ)՝ 15,200.00 հազ. դրամ:

Պայմանագրում 15,200.00 հազ. դրամ նախատեսվելով «...Հետագա արքեկերացիոն ծրագրերի իրականացում ծրագրի մասնակիցների համար....» որևէ հստակ ժամկետ չի սահմանվել դրա կատարման համար և որևէ վերահսկողական և կատարողական գործառույթ տվյալ բաղադրիչի իրականացման համար չի սահմանվել:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները:

«Այս բաժնում ներկայացված տեղեկությունների և եզրակացությունների վերաբերյալ առարկություններ չունենք»:

9. ՉՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ (ԳԱՂՏՆԻ) ՄԱՍ

10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու միջոցով, պետական գաղտնիք պարունակող՝ ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև ռազմական կարիքների ապահովման նպատակով անշարժ գույքի ձեռքբերման մեկ անձից գնումներն իրականացնելիս, սահմանել հայտի, ինչպես նաև որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումների պահանջ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը

Հայաստանի Հանրապետությունից դուրս անցկացվող ցուցահանդեսների տաղավարների կառուցման և ապամոնտաժման աշխատանքների պայմանագրերով նախատեսել պիտանի ապրանքների հետ վերադարձ և դրանց հանձնում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին (դեսպանատներին, հյուպատոսություններին և այլն):